

4357

222h




1916

281-6

4-47





32

ՏՊԱԳՐԵԱԼ ՊԱՏՃԷՆ

ԵՒ ԱՆԳՂԻԵՐԷՆ ՔԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԻ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**Տ. Տ. ԳԵՈՐԳԱՅ Ե.**

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՌ ՀԱՅՍ

ՈՐՔ Ի ՀՆԴԻԿՍ

ԵՒ Ի ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԿՂԶԻՍ

2001

ԱՆ

281.6

7-47





# ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

եւ անհասանելի կամօքն Աստուծոյ եպիսկոպոսապետ  
եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրի-  
արք Համազգայան Նախամեծար Արքոյ Արարա-  
եան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթո-  
ղիկէ Էջմիածնի, Արժանապատիւ վիճակաւոր Քահա-  
նայից մերոց, զգօն Հոգաբարձուաց եւ Անդամոց Խոր-  
հրդարանաց Եկեղեցեաց, բարեջան Երեսփոխանաց,  
շնորհունակ Սարկաւագաց, համեստափայլ եւ ժրջան  
Տիկնանց, մաքրակենցաղ եւ շնորհափայլ Կուսանաց, աշ-  
խատասեր վաճառականաց, հոգածու Անդամոց կրթ-  
թական, բարեգործական, որբախնամ եւ այլ Աստու-  
ծահաճոյ Հաստատութեանց, քրտնաթոր Արհեստաւո-  
րաց եւ առհասարակ ընդհանուր Հաւատացելոց Հայկազ-  
եան սեռի, արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց, մեծի



և փոքու, ամենեցուն, որք ի տար աշխարհ յաժեալ սփռեալ կայք նժգեհոթեամբ ի մէջ այլալեզու և տա-  
րակրօն ազանց, հոգեւոր զաւակաց մերոց և հարազատ  
որդւոց Մօրս մերոյ Լուսոյ, որ ի սահմանս աշխար-  
հին Հնդկաց եւ ի կողիս սահմանաւերձ, ողջոյն սիրոյ  
հասցէ ի Միաճնաէջ Ս. Կաթողիկէ Մայր Տաճարէս, ի  
Սուրբ Լուսաւորչէն Մերմէ և ի Մէնջ, որ գլուխ եմք  
լրութեան Ազգիս և Հօտապետ եկեղեցւոյս. Ամէն:

Ո՞ւ տայր զաչս իմ աղբիւրս արտասուաց և լայն  
զժողովուրդ իմ զտիւ և զգիշեր, և ողբայի զվիրաւորեալ  
որդիս իմ և զգոտերս. ո՞ւ տայր ինձ դոյզն ինչ օթեան  
յանապատս միջօրէից, յայց ելանել տարագիր որդւոց  
իմոց սիրելեաց և բան սփոփանաց յունկն նոցա խօսել,  
բարբառ քաջալերութեան ի սիրտ նոցա և ի հօգի յե-  
զուլ, զի մի իսպառ լքեալ ի բեկմանէ որ ի վերայ ե-  
հաս, յաղթահարեցի ի տառապանացն և ի տուայտու-  
թեանց:

Որդիք իմ տարագիր ի հայրենի ժառանգութենէ  
նշաւակ անօրինին եղեն և ցրուեցան ի վերայ երեսաց եր-  
կրի. մտին որդիք ժանտ անօրինին ի ժառանգութիւն  
հարցն մերոց և յաւեր դարձուցին զնա. պղծեցին զտա-  
ճարս մեր սուրբ և զեկեղեցիս մեր որպէս զհիւզս մըր-  
դապահաց արարին: Արկին զգիւղունս ծառայից և պաշ-  
տօնէից Տեառն գէշ թռչնոց երկնից և զմարմինս մարց  
մերոց և քերց, դատերաց մերոց և զաւակաց ի կեր գա-  
զանաց երկրի վայրի: Հեղին զարիւն նոցա, որպէս զլուր,  
և ի կարմրութենէ արեան նոցա ի բոսոր փոխեցան գետք  
ամենայն. ոչ ոք էր որ թաղէր զգիւղն նոցա. ի բազմու-

թենէ դիակաց գետք զգնացս իւրեանց յետս դարձու-  
ցին: Եղեն դիակունք մեր իբրեւ զխոտ, որ զկնի հնձողի,  
և ոչ ոք էր, որ ժողովէր զնոսա: Ալիք եփրատայ և կո-  
հակք Տիգրիսի հանապաղ զմարմինս անշունչս լուանային  
զհօտին մերոյ ի լուացումն նահատակաց. ապականեցաւ  
երկիր մեր իսպառ և ոչ գտաւ երէ իսկ վայրի որ ար-  
ածէր ի նմա, զի սուր թշնամոյն առհասարակ եկեր  
զորդիս իմ և զամենայն շունչ կենդանի, և ոչ ոք էր  
որ գայր ի թիկունս օգնականութեան և բազուկ Տեառն  
ծանրացաւ ի նոսա: Եղաք մեք ի նախատինս դրացեաց  
մերոց և ծաղր կատականաց որդւոց անօրինին. և ա-  
սացին հեթանոսք, ո՞ւր է Աստուած նոցա, որ փրկեցէ  
զնոսա ի ձեռաց մերոց, մաշեցուք զնոսա ի հուր և ի  
սուր, մինչեւ իսպառ չքացի արմատ կենաց և գոյու-  
թեան նոցա:

Այլ արդ, որդիք իմ հարազատք և զաւակունք իմ  
հոգեւորք, լուարուք ձայնի իմում և պատգամաց որ առ  
Ձեզք խօսիմ: Ազաչեցի ես առ Տէր ի հեծութեան  
իմում և խնդրեցի. «Ծանո՛ ինձ, Տէր, և ծանեայց զճա-  
նապարհս, յապրեցուցանել ի նեղութենէ զժողովուրդ  
իմ, որ յիս հաւատացաւ ի Բէն, զի չարիքն փոխանա-  
կեցի ի բարի և աւեր նոցա ի շինութիւն, և սպա-  
ռումն նոցա ի բազմացումն:»

Ձայն Տեառն առ իս և ասէ. «Ահա ես ընում զեր-  
կիր քո աւերակ և զբնակիչս երկրիդ կրկին ածից և  
կեցուցից զնոսա. յարուցից նոր Յեսու, որ առաջնոր-  
դեացէ զնոսա վերստին ի յարկս բնակութեանց իւր-  
եանց և ի տաճարս նոցա կրկին ունկնդիր աղօթից նո-



53189-ա



յա եղէց. գթացայց և ողորմեցից ի նա և այլեւս ի՛ն՝  
կորացի ժողովորդ քո, զի յարուցից զորդիս որդւոց  
քոց, որք ի տար աշխարհ և ընդ. օտար երկնովք և  
ատեղօք և նոքա եկեացեն յօգնականութիւն: Մի՛  
անխայեացեն նոքա յաղքատն և ի տնանկն և զանձինս  
տնանկաց կեցուցեն, զի տնանկքդ եղբարք համարիւնք  
և քորք համասեռք են նոցա. ծագեսցի կրկին արե-  
գակն արդարութեան ի վերայ մնացորդաց նոյա ի  
ձեռն օտարաց, զի մարդասիրութիւն և գութ ոչ գիտէ  
համասեռից ծննդեան տարբերութիւն: Եկեացեն որդիք  
Քո, որ յերկիր օտար, յօգնականութիւն Մօրն իւրեանց  
սգազգեստի և վերստին նորոգեսցեն զնա, զարձուս-  
ցեն զսուգ նորա յուրախութիւն և զաւեր նորա ի պլտ  
զաբերութիւն:»

Վասն այդորիկ ահաւասիկ առաքեմ առ Ձեզ  
զԴերապատիւ Տ. Թորգոմ Եպիսկոպոսն, զԱռաջնորդ-  
հօտին մերոյ որ յեգիպտոս, նա պատմեցէ Ձեզ մի  
ըստ միովէ զամենայն. յորդոր կարգամբ սիրելեացդ  
մերոց, մեծաց և փոքունց, արանց եւ կանանց, սիրով  
զնել ունկն խրախուսական բանից նորա և յորդորանաց  
և ձեռն օգնականութեան կարկառել առ ի վերստին  
շինել զՀայրենիս մեր աւեր, կրկին կանգնել զտաճարս  
մեր ի փառաբանութիւն անուան Տեառն, բանալ  
զգպրանոցս մեր յուսումն կրթութեան և դաստիարա-  
կութեան, ունել ապաստանափառնս որքոց, տունս ապա-  
ւիւի ծերոց և այրեաց, վայրս ասպնջականս անոքից և  
հիւանդաց, զի աչք Տեառն կրկին հայիցէ առ մեզ քաղց-  
րութեամբ և բազուկ նորա զօրաւիգ լիցի հօտին իմոյ  
ի գառնալն նոցա ի յարկս իւրեաց աւերեալս և յանշնս:

Չմտաւ ածէք, զաւակունք իմ հոգեւորք, զնախ-  
նեացն Ձերոց գործս հոգեւոր արութեան, որք զհետ հա-  
ճոյից սրտից իւրեանց գնացին և ոչ անխայեցին ամենե-  
ւին զտուրս իրաւատս, առ ի զկարօտութիւն հայրենեաց  
իւրեանց լցուցանել. որք ընդ. օտար աստեղօք՝ այլ ոգիք  
նոցա զհայրենեօքն կայր մածեալ. ընդ. օտարազինս դե-  
գերեալ, այլ ոչ երբեք մոռանային զՄայրն իւրեանց  
յուսոյ, ընդ. այլասեռս և տարակրօնս վարելով կենցաղ,  
այլ ոչ ամենեւին թագուցանէին զկայծ բոբբօք յուսոյ,  
անթեղեալ ի սիրտ նոցա. հոգի նոցա միշտ ընդ. հա-  
մազինս, միտք նոցա հանապաղ առ համարիւն իւրեանց  
եղբարց բարօրութիւն: Տուրք նոցա ոչ երբեք կասե-  
ցան ի հոսանից, ձախ նոցա ոչ երբեք գիտաց զինչ  
գործեաց աջ նոցա ի սփոփումն մերձաւորի, ի խնա-  
մածութիւն կարօտելոյն, ի սրբումն արտասուաց որ-  
բոցն և այրեացն, ջուր գառնութեան վշտագնելոյն ի  
քաղցրութիւն սննդեան փոխեցաւ ի ձեռն նոցա: Յու-  
ցէք զանձիս Ձեր որդիս արժանիս նախնեաց Ձերոց ար-  
ժանաւորաց, ըստ տրոյգ եւ ըստ սիրոյն որ առ մերս  
հանրական գործ:

Արիք, եկայք որդիք մեր հոգեւորք, շուրջ պատե-  
ցէք զհրեշտակին մերոյ, նուիրակիս. և հոգեւոր արն-  
տեսիս, բացէք զգուռն առատ տրից առ ի լցուցանել  
զընդհանուր կարիս Ազգիս մերոյ տառապելոյ, զի մի՛  
պարծեսցի հզօրն ի զօրութիւն իւր, եթէ մի՛ այլեւս  
կանգնեցի վերստին աւերեալն ի ձեռն իմ, այլ իմաս-  
տութիւն տկարացն պանծացի, եթէ Տէր է որ շինէ,  
աջ Ամենակալին է, որ կանգնէ, կա՛լք Տեառն է, որ  
առաջնորդէ զտկարացն գնացս:



Իսկ մեք, որ գլուխ եմք լրութեան Ազգիս, աղօթեմք առ Տուհն ամենայն բարեաց տալ առատապէս պարգեւս բարեաց այնոցիկ, որք ոչինչ խնայեցեն կարօտելոյն. յորդորեմք ո՛չ երբեք լքանել ինեղութեանս, զի յուսով կամք ակնդէտ առ երջանիկն ապագայ և սիրով և համբերութեամբ աղաչեմք զամենեւեանդ տանել զխաչ մեր և զբաժակ դառնութեան: Հաւատարմք եթէ այցելութեամբ այց արասցէ մեզ Աստուած և պահպանեցէ զօրդիսդ իմ սիրելիս ի Տէր. Ամէն:

ԳԷՈՐԳ Ե.

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄ. ՀԱՅՈՑ

Ի 22 Ապրիլի 1916 ամի

Ըստ Տոմարիս ՌՅԿՆ.

Ի Հայրապետութեան մեռում Ե. ամի

յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ի Վաղարշապատ

Թ. 902



WE, KEVORK, SERVANT of JESUS-CHRIST and, by the grace of God, chief Archbishop and Catholicos of all Armenians, and supreme Patriarch of the superior national See, of the Araratian apostolic Basilica of saint Etchmiazin, send hereby, from this holy apostolic Temple of Etchmiazin, and in the name of our Saint Illuminator and in our own name who are the Chief of the whole Nation and great Pastor of the Church, our greetings full of love to our reverend diocesan Priests, wise Members of Church-Administrations, diligent Representatives, gracious Deacons, honest and zealous Ladies, pure and graceful Virgins, industrious merchants, careful members of educational, beneficial, orphan-breeding and all other godly institutions, toiling workmen, and generally all the faithful Armenian, men and women, old man and children, great and small, all who are scattered in foreign countries with different languages and religions, our spirit-



ual children and proper sons of our Mother of Light, specially those who are in India and in the neighbouring Islands. Amen.

O! that my eyes were fountains of tears, that I might weep day and night, and mourn for my sons and daughters! O! that I had a small dwelling in the meridional deserts, that I might visit my darlings and pour soothing words into their ears and cheering speeches into their hearts, lest they should break from the desolation which came on, and they should sink under sufferings and torments.

My children, driven away from their hereditary homes, were delivered to the wicked and were scattered all over the world, and the sons of the wicked entered the patrimonies of our fathers, and ruined and violated our holy temples and made our churches like the orchard-keepers' huts. They cast the corpses of the Lord's servants and ministers as a prey for the wild fowls of the sky, and the bodies of our mothers and sisters, of our daughters and sons as a prey for the wild beasts of the earth, They shed their blood like water, and all the rivers were tinged in scarlet with the redness of their blood; there was nobody to bury their dead bodies; and the rivers were turned back in their currents with the multitude of their corpses. Our dead bodies became like the grass behind the mowers, and there was nobody to gather them. The waves of Euphrates and of Tigris washed the inanimate bodies of our flock like those of martyrs; our land was entirely spoiled, and not even a wild deer came to graze in it; for the sword of

the enemy ate all my children and every breathing life; and nobody came to help them, and the arm of the Lord lay heavy upon them. We became an outrage to our neighbours, a mockery to the impious; and the heathens said: Where is their God, to save them from our hands; let us exterminate them with fire and sword, until the root of their life and existence be annihilated.

Now, o my sons and spiritual children, hear my voice and the commandments I give to you. I have prayed God in my groans, and I have besought: Let me know, o Lord, the way how to save my people from their sufferings, this people whom Thou gavest unto me, that I may change their evil into good, and their ruin into prosperity, and their exhaustion into multiplication.

And the voice of the Lord said to me: Now, I will populate thy wasted land, and I will bring again the inhabitants of this country, and I will cause them to live again there; I will rouse a new Joshua, who will lead them back to their homes, and I will listen again to their prayers in their temples. I will have pity on them, and thy people will no more be afflicted; for I will raise up the sons of thy sons who are abroad and in foreign countries, and they will come to help thee. They will not turn aside their eyes from the poor and the homeless, for these poor and homeless are their own brothers and sisters; and the sun of justice will rise again, by means of strangers, over their remainders; for, to the eyes of humanity and charity, there is no difference between beings of common origine. Thy sons living now in foreign countries will come back to help their Mother in mourning into joy and her desolation into fertility.



Therefore I send to you His Eminence Bishop Thorgom, prelate (Arachnort) to our flock in Egypt; he will give you a full account of everything. We exhort you, our dear children, great and small, men and women, to listen with love to his words of comfort and exhortation, and to stretch a helping arm to rebuild our ruined country, to reconstitute our temples for the glorification of the Lord's name, to open our schools for instruction and education, to found orphanages and asylums for old men and widows, hospitals for the sick and those who have nobody to help them, in order that God's eyes look again on us with sweetness, and his arm sustain my flock on their return to their ruined and desolate homes.

Remember, o my spiritual children, the virtuous deeds of our ancestors, who followed the impulsion of their hearts, and never neglected to make generous gifts for the great needs of their fatherland; who were living in far-off countries, but whose hearts were attached to their country; who were wandering about amongst foreign nations, but never forgot their Mother of Light; who were living among people of different race and religion, but who never let the flame of hope breeding in their bosoms be extinguished; whose souls were always with their compatriots, and whose minds were perpetually in tendency to the happiness of their countrymen; whose gifts never ceased to flow; whose left hand did not know what their right one was doing for the comfort of their neighbours, for the soothing of the needy, for the wiping of orphans' and widows' tears, and by whose good office the bitterness of the afflicted was changed into sweet food for them. Show yourselves to be the

worthy children of your meritorious forefathers by your gifts and by your adhesion to our public work of benevolence.

Rise, and come, o you our spiritual sons, surround our messenger, legate and spiritual minister. Open wide the gate of generous gifts in order to provide for the general needs of our distressful nation, that the mighty may not boast and say: What was overthrown by my hands can never more be re-established; but that the wisdom of the weak may boast and say that it is the Lord who builds, it is the hand of the Almighty that founds, it is the will of the Lord that guides the steps of the weak.

As for us, who are the Chief of the whole Nation, we pray the giver of all favours to bestow plenty of good gifts on those who will have spared nothing to the needy, and we exhort them never to despond or to be disheartened in this distress, for we are hopeful for a happy future, and we beg you all to bear with love and forbearance this our cross and cup of bitterness. We believe on God's visit to us and that He will preserve you, my children in God. Amen.

22<sup>nd</sup> of April 1916,  
Armen. Cal. 1365.  
on the V year of our Patriarchate,  
at the Araratian Superior See  
of St. Etchmiazin  
in Vagharshabad.  
Sub. 902.







Էջ Միածինն ի Հօրե ,  
Եւ լոյս փառաց ընդ նմա .  
Զայն հնչեցին  
Սանդարամեֆ անդնդոց :

Տեսեալ զլոյս մեծ  
Հայրապետին Գրիգորի .  
Պատմե ցնծութեամբ  
Հաւասացեալ արեւոյին :

Եկայք շինեցուի  
Սուրբ զխորանն լուսոյ .  
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս  
Ի Հայաստան աշխարհի :



ՏՊԱԳՐ՝ ԶԱՐԵՀ ՊԵՐՊԵՐԵԱՆ

4357

ՀՀ Ազգային գրադարան



NL0030630



